ՀԱՅԱՍՏԱՆ
Երաժշտական

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS

ARMENIA
Musical

2(47)2014

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ Musical ARMENIA 2(47) 2014

ISSN 1829-0019

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ԱՐՄԱՇԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ.

պատմական ակնարկ

ՆԱՆԵ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԻՍԱԿՅԱՆ

Երաժշտագետ,
Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի շրջանավարտ մագիստրոս

Հայ հոգևոր երգարվեստի Էջմիածնական հինգ ավանդական երգվածքները (1. էջ 102, էջ 65-66)՝ (համարվում է մայր երգվածք), Կոնստանդնուպոլսի, Վենետիկի, Երուսաղեմի և Նոր Ջուղայի կամ հնդկահայոց, որ ձևավորվել են XVIII-XIX դարերում, առ այսօր կարիք ունեն բազմակողմանի և հանգամանալի ուսումնասիրության, ինչպես նաև համեմատական վերլուծության, ինչը հիմնարար նշանակություն է ձեռք բերում հայկական միջնադարյան երաժշտության մի շարք բնագավառների հետազոտման դիտանկյունից (2. էջ 157-158, էջ 52-53): Կարևորագույն խնդիրներից մեկն է Ութձայն համակարգի ուսումնասիրումը, որի ուղղությամբ արդեն որոշակի աշխատանքներ են կատարվում:*

Վերոնշյալ երգվածքների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում արմաշական ավանդույթը, որը հանդիսանում է պոլսական երգվածքի մի առանձին և ուրույն ենթաճյուղը (3. էջ 155-258), որի հիմնադիրն է պոլսահայ անվանի ձայնագրագետ, խմբավար, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Չերչյանը (1828-1901): Նա աշակերտել է Հ. Լիմոնճյանի սան Արիստակես Հովհաննիսյանին, որպես երաժշտապետ պաշտոնավարել Կ. Պոլսի զանազան եկեղեցիներում, մասնավորաբար նաև՝ Գում-Գաբուի Մայր եկեղեցում: 1884 թվականից մինչև կյանքի վերջը Հ. Չերչյանը եղել է Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքին կից Ժառանգավորաց դպրոցի, ապա նաև Դպրեվանքի երաժշտապետը:

Արմաշը, որ գտնվում է Փոքր Ասիայի Նիկոմիդիա (Իզմիտ) գավառում, հայտնի է իր Չարխափան Ս. Աստվածածին վանքով: Մ. Օրմանյանը վանքի հիմնադրության տարեթիվ է ընդունում 1611 թ.՝ Թադեոս Եպիսկոպոսի ձեռքով: Վերջին ժամանակներս, պատմական լրացուցիչ տվյալների համաձայն, շրջանառվում է վանքի հիմնադրման անհամեմատ վաղ տարեթիվը՝ 1416 թ.: Արմաշի վանքն ունեցել է նշանավոր հոգևոր առաջնորդներ, որոնք իրենց արգասավոր ձեռնարկներով մեծապես նպաստել են կրթական գործի վերելքին:*

1889 թ. Արմաշի վանքին կից Ժառանգավորաց ուսումնարանը Կոնստանդնուպոլսի Հայոց պատրիարք Խորեն արք. Աշըգյանի հատուկ կոնդակով վեր է ածվել Պատրիարքությանը ենթակա Դպրեվանքի՝ հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատության աշակերտներն անցնում էին ընդհանուր և եկեղեցական պատմություն, կրոնների պատմություն, աստվածաբանություն, հայոց պատմություն և հայ մատենագրություն, իմաստասիրություն և այլն: Նրանց դասավանդում էին հայ մտքի և մշակույթի այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին՝ Մաղաքիա արք. Օրմանյանը՝ հետագայում Պոլսո Հայոց պատրիարք, Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը՝ (1860-1930 թթ.) հետագայում Երուսաղեմի Հայոց պատրիարք [հայ մեծ բանաստեղծ Պետրոս Դուրյանի (1851-1872 թթ.) կրտսեր եղբայրը] և ուրիշներ: Դպրեվանքի շրջանավարտներն են եղել բազմաթիվ հոգևորական գործիչներ, առաջադեմ մտավորականներ:

Հ. Չերչյանի անդուլ ջանքերի շնորհիվ դպրեվանքն աչքի է ընկել նաև երաժշտության ուսուցման բարձր մակարդակով: Աշակերտներն ուսումնասիրել են հայ եկեղեցական երաժշտություն, հմտացել նոր հայկական ձայնագրության մեջ, ծանոթացել եվրոպական երաժշտական մշակույթին: Պահպանվել են աշակերտների ձեռքով հայկական նոտագրությամբ գրի առնված բազմաթիվ ձեռագրեր:

Դպրեվանքում են կրթություն ստացել հայտնի ձայնագրագետ և երգահան Հակոբոս Այվազյանը, եկեղեցական գործիչ ու երաժիշտ Արտավազդ Գալենտերյանը:

Համբարձում Չերչյանը հայ հոգևոր երաժշտության պատմության մեջ անուրանալի ավանդ է ներդրել ամենից առաջ իր ձայնագրյալ ժողովածուներով: Դրանք են՝ «Շարակնոց»-ը, «Ժամագիրք»-ը, «Տաղարան»-ը, «Կանոն Խաչվերաց առնելոյ որպէս կատարի ի Սուրբ Ուխտն Արմաշու» ձայնագրությունները, ինչպես նաև հատվածներ Պատարա-

* Հարցի առնչությամբ հիշատակելի են հայ անվանի միջնադարագետ-երաժշտագետներ Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի տեսակետները, ըստ որոնց՝ նման ուսումնասիրությունը խազագիտության բնագավառում տարվող աշխատանքների հիմքերից մեկն է: Նշված խնդրին անդրադարձել է նաև Լ. Հակոբյանը (2. էջ 249, էջ 190):

* Արմաշի վանքի հոգևոր-կրթական պատմության մասին տե՛ս Մ. Օրմանյանի, Պ. Մուրադյանի և Ա. Մուշեղյանի նշված աշխատությունները (3.):

գից: Դրանք մեզ են հասել և ի թիվս այլ ձեռագրերի՝ պահվում են Երևանի Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում և Մաշտոցի անվան Մատենադարանում:

Նշյալ ձայնագրությունների մեծ մասը Հ. Չերչյանն արել էր դեռևս Կոնստանդնուպոլսում գտնվելիս ժամանակ, սակայն գործնական կիրառության մեջ դրեց Արմաշի վանքում՝ այդպիսով հիմք դնելով պոլսական երգվածքի մի նոր ճյուղավորմանը՝ արմաշական ավանդույթին:

Հ. Չերչյանի ձայնագրագիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Շարակնոցը: Այն ստվարածավալ աշխատություն է (մոտ 1500 էջ), որ գրի է առնվել 1856-1859 թթ., այսինքն՝ Ն. Թաշճյանի և Ե. Տնտեսյանի համանման ձեռնարկներից բավական առաջ:

Հ. Չերչյանի ձայնագրած Շարակնոցի՝ մեր կատարած ուսումնասիրությունն ըստ Ութձայն համակարգի (Հարության հարցնակարգերի և Հարության Ավագ օրհնությունների օրինակով) և դրանց համեմատական վերլուծությունը, Ն. Թաշճյանի ձայնագրած Շարակնոցի համանուն երգաշարերի հետ բացահայտեցին մի շարք օրինաչափություններ, որոնք ընդհանուր են երկու ձայնագրությունների համար:

Մասնավորեցնենք մեր դիտարկումները.

*1. Հարության հարցնակարգի թաշճյանական և չերչյանական ձայնագրություններում ձայնեղանակների սկսվածքների և բուն շարականների համեմատության արդյունքում դրսևորվում են ձայնակարգային անփոփոխ հիմքեր, բացառությամբ **ԱՁ** և ԱԿ ձայնեղանակների և մյուս ձայնեղանակներում ընթացող մի քանի այլ նմուշների:*

2. Հարության հարցնակարգերում հանդիպում են բոլոր դարձվածք տիպի ձայնեղանակները:

*3. Ավագ օրհնություններում դարձվածք տիպի ձայնեղանակներից հանդիպում են միայն **ԱԿ** և **ԳՁ** դարձվածք եղանակները (4. էջ 36), թեպետ, Հ. Չերչյանի ձայնագրությամբ «**Օրհնութիւն**» սկսվածքը ԴՁ առաջին դարձվածք եղանակին է պատկանում:*

***4.** «**Հարց**» շարականներն աչքի են ընկնում հետևյալ տիպական հատկանիշներով.*

*ա) հատկապես «**Հարց**» շարականներում, նաև «**Գործք**» բաժիններում են հանդիպում ձայնեղանակային համադրումները՝ մայր և դարձվածք, կամ ինչպես **ԲՁ** երգաշարերում՝ **ԲՁ** և **ԳՁ**:*

բ) կարգի մաս հանդիսացող մյուս բաղկացուցիչների համեմատ դրանք ընդգրկում են առավել մեծ ձայնածավալ:

***5.** «**Ողորմեա**» և «**Տէր յերկնից**» շարականներում (կամ սկսվածքներում) «**Հարց**» շարականի (կամ սկսվածքի) համեմատությամբ հաճախ փոխվում է հիպո ոլորտի ձայնակարգային կառուցվածքը՝ կախված հնչյունաշարի ծավալից: Սակայն պահպանվում է ձայնեղանակի վերջավորող ձայնի վերին ոլորտի ձայնակարգային կառույցի հիմնական կորիզը:*

***6.** «**Օրհնութիւն**» սկսվածքում և Հարության Ավագ օրհնություններում գրեթե միշտ պահպանվում են Հարության հարցնակարգի «**Ողորմեա**» կամ «**Տէր յերկնից**» շարականների (կամ սկսվածքի) ձայնակարգային առանձնահատկությունները:*

***7.** «**Հարց**» շարականները, ինչպես նաև «**Հարց**» սկսվածքները, գրեթե միշտ ծավալվում են մեղեդիական զարդոլորուն ոճում: «**Ողորմեա**»-ներին հատուկ է առավելապես վանկային (նաև ներվանկային), «**Տէր յերկնից**» շարականներին՝ ներվանկային տիպի շարադրանքը:*

*8. Հարության Ավագ օրհնությունները ծավալվում են գերազանցապես վանկային, նաև ներվանկային մեղեդիական ոճերում, ուստի զերծ են ձայնակարգի գործառույթային աստիճանների բազմակի շրջազարդումներից և մեղեդու ծավալման ու զարգացման տեսանկյունից իրենց բնույթով մոտ են հատկապես «Ողորմեա» շարականներին (երբեմն նաև «**Տէր յերկնից**»):*

9. Հարության հարցնակարգերի և Հարության Ավագ օրհնությունների համեմատական ուսումնասիրությունն ի հայտ է բերում նաև Ն. Թաշճյանի և Հ. Չերչյանի ձայնագրությունների մեղեդիական դարձվածքների ակնհայտ հարազատություն: Դա հատկապես նկատելի է ԱՁ, ԱՁ դարձվածք, ԱԿ, ԲՁ, ԲՁ դարձվածք, ԲԿ, ԳՁ, ԳՁ դարձվածք, ԴՁ (երբեմն նաև ԴՁ դարձվածք) և ԴԿ ձայնեղանակներում:

Երկու ձայնագրությունների ձայնեղանակային դրսևորումների առավել ակնհայտ տարբերությունները վերաբերում են ԱՁ, ԱԿ դարձվածք և ԴՁ դարձվածք ձայնեղանակի առանձին նմուշներին:

Հ. Չերչյանի Շարակնոցը հայ հոգևոր երգարվեստի ուրույն ենթաճյուղը ներկայացնող կարևորագույն սկզբնաղբյուրներից է, որի ամբողջական ուսումնասիրությունը կնպաստի հայ միջնադարյան երաժշտությանն առնչվող տեսական բնույթի մի շարք կնճռոտ խնդիրների պարզաբանմանը:

Այսպիսով, արևմտահայության միակ հոգևոր բարձրագույն հաստատությունը՝ Արմաշի դպրեվանքը, իր հիմնարար առաքելությունից բացի, կարևորագույն նշանակություն է ձեռք բերել որպես սեփական երաժշտական ավանդույթներ ունեցող կրթօջախ, դրանով իսկ անգնահատելի դեր ունենալով հայ հոգևոր երգեցողության դպրոցների պատմության մեջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Թահմիզյան Ն. Կ.*, Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, //Բանբեր Մատենադարանի, 1977 թ., N 12: Նույնի՝ Մակար Եկմալյան, Երևան, 1981 թ.:
2. *Աբայան Ռ. Ա.*, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959 թ.; *Թահմիզյան Ն. Կ.*, Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1982 թ.:

Л. Акопян. Особенности мелодического строения шараканов и их отражение в хазовом (невменном) письме, «Պատմա-բանասիրական հանդես», 1983, N 2-3: **Его же: Мелодические структуры средневекового армянского восьмигласия и ха–**

зовое (невменное) письмо, «Պատմա-բանասիրական հանդես», 1985 թ., N 2:

3. *Մուշեղեան Ա.,* «Արմաշի դպրեվանքի երաժշտական ավանդույթները» ուսումնասիրությունը «Արմաշի դպրեվանքը» գրքում (Մաս Բ), Եր., 1998 թ.: Նաև *Մուշեղյան Ա.,* Համբարձում Չերչյանը և Արմաշի դպրեվանքի երաժշտական ավանդույթները, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2005 թ.:
4. *Թահմիզյան Ն. Կ.,* Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության Ավագ Օրհնությունները, //Էջմիածին, 1973 թ.:

Բանալի-բառեր. *Հայ հոգևոր երգարվեստ, Արմաշի հոգևոր դպրեվանք, Համբարձում Չերչյան, Նիկողայոս Թաշչյան, Շարականներ, «Ութձայն» (Հայկական ութձայն), Հարության հարցնակարգերի, Հարության Ավագ օրհնություններ*

Ключевые слова: *Армянское духовное песнетворчество, Армашская духовная академия, Амбарцум Черчян, Никогайос Ташчян, Гимнарий, "Utdzayn" (Армянское восьмигласие), Каноны на Воскресение, Великие гимны на Воскресение.*

Keywords: *Armenian medieval music, The monastic high school of Armash, Hambardzum Cherchyan, Nicoghayos Tashchyan, "Utdzayn" (Armenian Eight mode system), Resurrection canons, Major Blessings of the Resurrection.*

Տեղեկություններ հեղինակի մասին. *ՄԻՍԱԿՅԱՆ ՆԱՆՆԵ ՄԻՔԱՅԵԼԻ (ծնվ. 31.10.1991 թ., ք. Երևան արվեստագետի ընտանիքում).: 2008 թ. ավարտել է Պ. Չայկովսկու անվ. միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը (գերազանց), 2012 թ. Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժնի բակալավրիատը (գերազանց)՝ «Հոգևոր մոնոդիան հայ կոմպոզիտորական արվեստում» դիպլոմային աշխատանքով (ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆ. Մ. Ա. Կոկժան), 2014 թ. նույն բաժնի մագիստրոսականը (գերազանց)՝ «Ութձայն համակարգի հիմնական բնութագրերը Հարության երգաշարերում. արմաշական ավանդույթ» դիպլոմային աշխատանքով (ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆ. Մ. Ռ. Նավոյան): Զեկուցումներով հանդես է եկել Ուսանողական գիտաստեղծագործական ընկերության (ՈՒԳՍԸ) կազմակերպած բոլոր գիտաժողովներին, ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթում տպագրել երաժշտաքննադատական հոդվածներ. ներածական խոսքով ելույթներ է ունեցել երիտասարդ կոմպոզիտորների և կատարողների համերգներին: 2014 թ. հոկտեմբերին մասնակցել է «Երաժշտագիտությունն արդի փուլում» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովին (Երևան, Հայաստան,)՝ «Հայ հոգևոր երգարվեստի արմաշական ավանդույթը. պատմական ակնարկ» թեմայով:*

Сведения об авторе: *МИСАКЯН НАНЕ МИКАЕЛОВНА (род. 31.10.1991, г. Ереван в семье искусствоведа). В 2008 г. окончила среднюю специальную музыкальную школу им. П.Чайковского (с отличием), в 2012 г. - бакалавриат ЕГК - музыковедческое отделение вокально-теоретического факультета (с отличием), диплом. работа "Духовная монодия в творчестве армянских композиторов" (рук., к-т искусств., композитор, проф. М. А. Кокжаев), 2014 г. магистратуру (с отличием), диплом. работа "Основные характеристики "Utdzayn" (Армянского восьмигласия) Канонов Воскресения в армашской традиции" (рук., к-т искусств., проф. М. Р. Навоян). Выступала с докладами на всех конференциях СНТО, с вступительным словом на концертах молодых композиторов и исполнителей, автор критико-публицистических статей в газете "Музыкант". В октябре 2014 г. участвовала в Международной музыковедческой конференции молодых ученых "Армашская традиция армянского духовного песнетворчества (исторический очерк)(г. Ереван, Армения).*

Information about the author: Go to P. 5.

Резюме

Музыковед ***Нане Микаеловна Мисакян. - "Армашская традиция армянского духовного песнетворчества (исторический очерк)".***

Пять традиционных распевов армянского духовного песнетворчества (Константинопольский, Венецианский, Иерусалимский и Ново-Джульфинский или Индийско-армянский), формировавшихся в XVIII-XIX веках, до сих пор не подверглись всестороннему изучению. Среди них важное место занимает Армашская традиция, которая является отдельной и оригинальной ветвью Константинопольского распева. Основатель этой традиции - известный константинопольский музыкант-теоретик, педагог, музыкально-общественный деятель Амбарцум Черчян (1828-1901), который в течение длительного времени был регентом и преподавателем музыкальных дисциплин в школе, а затем и в духовной академии при церкви Пресвятой Богородицы в Армаше (кантон Никомедия в Малой Азии).

Благодаря А. Черчяну уровень преподавания музыкальных дисциплин в духовной академии стал очень высок. Его выпускниками стали известные музыканты Акопос Айвазян и Артавазд Галентерян. Большую ценность представляют дошедшие до нас сборники духовных песнопений, переписанные руками студентов академии, в которых, по сути, и представлена армашская традиция. Таким образом, Армашская духовная академия, сыграв важную роль в истории армянского профессионального песнетворчества, прославилась как крупнейшее учебное заведение, имеющее богатые музыкальные традиции,

Творческое наследие А. Черчяна составляют записанные им армянской нотописью сборники "Шаракноц" (Гимнарий), "Жамагирк" (Часослов), "Тагаран" (сборник духовных песнопений), Канон на Воздвижение Креста (согласно Армашской монастырской традиции), отрывки из "Литургии" и т. д. Среди них важное место занимает Гимнарий - капитальный труд (из 1500 страниц), записанный 1856-1859 гг. Исследование Канонов на Воскресение (Harutyan Hartsnakarger) и Великих гимнов на Воскресение (Harutyan Avag Orhnutyunner), проведенное нами в рамках системы "Utdzayn" (Армянского восьмигласия) и их сравнительный анализ с аналогочными песнями из Гимнария, записанного Н. Ташчяном, выявило некоторые общие закономерности, касающиеся гласов, функциональных степеней, характерных мелодических оборотов и основных характеристик мелодических стилей.

Summary

Musicolojist ***Nane Miqael Misakyan. - "The Armash Tradition of Armenian*** Spiritual Chanting ***(Historical Review)".***

Five traditional singing styles of Armenian spiritual chanting, i.e. those of Echmiadzin (which is considered to be the main one), Constantinople, Venice, Jerusalem and New-Julfa or Indian Armenian which was formed in the 18th - 19th centuries, have not been multilaterally studied in all details until now. From this viewpoint, the tradition of Armash is very important, as it is a separate and original branch of the Constantinople singing style. The founder of this tradition is Hambardzum Cherchyan (1828-1901), a renowned theorist of music, choir director and musical and public figure. For many years he was tutor of music at the school of the Armash monastery of the Holy Virgin (canton Nicomedia in Minor Asia), and then at the monastic high school.
Due to A. Cherchyan's the level of teaching musical disciplines in spiritual academy became very high.Famous musicians Hakobos Ayvazyan and Artavazd Galanteryan became his graduates.
Numerous manuscripts notified with new Armenian musical notation by the pupils were preserved, presenting in fact the Armash tradition.

The monastic high school of Armash played a great and significant role as an educational centre having its own traditions and made an inappreciable contribution to the development of Armenian sacred chanting schools.

H. Cherchyan is the author of several notified miscellanies, among which one may cite the Hymnal, the Breviary, the Book of Canticles, the Canon of the Cross Exaltation, as done at the Holy Monastery of Armash, as well as fragments of the Liturgy, etc. The Hymnal has a special importance in the musical theoretical legacy of H. Cherchyan. This voluminous work (about 1500 pages), was written down in 1856-1859. The investigation we made on the Hymnal of H. Cherchyan according to the Utdzayn system (on the example of the Resurrection canons (Harutyan Hartsnakarger) and the Major Blessings of the Resurrection), and their comparative analysis with the song ranges of the same name from the notified Hymnal by N. Tashchyan reveal a certain number of features common to both recordings. Those relate to the modes, their functional degrees, characteristic melodic phrases and fundamental characteristic of melodic styles.